


ԲԱԺԱՆՈՐԴԳՐՈՒԹԻՒՆ

Պաշտոնային համար 12 Ժր.
Տարեկան վճարումնայ 6
Մասնագրանակի համար տարեկան 15
Վեցամսեայ 8

Սեփական համար 3 Ժր.
Տարեկան վճարումնայ 1.50

Մանուցման տողը առանձին կրկնակ համար 40
Սակ վերջին կրկնակ համար 20
Ամսական գումար համար 20
Սեփական կրկնակ

Վաճառի համար ձեռքի 10 սակերի



R. P. Kalmecarian, Mechitharistengasse W. 4. (Austrie)

Նամակ եւ գրամ որիկն իմրագրութեան հասցիին

Редакция на вестник «Шаржумъ» Варна
Redaction du journal «Charjourn» Varna (Bulgarie)

Վիեննայի համար 0 ՍԱՆԹԻՄ X

Պաշտոնային համար ձեռքի 15 ՍԱՆԹԻՄ X

Գրութիւնք եւ չէն տրուի

ԼՈՒԳԻՐ ԱՋԳԱՅԻՆ. ԲԱՆԱԲԱՎԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ԶՈՐԵԲԵԱԲԹԻ ԵՒ ՇՈՒԼԻՍ ՕՐԵՐԸ

ՇՈՒԼԻՍ-Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԵՏԻ Ե ԿԱՆՆԻԿ ՎՃԱՐԷ

ՈՂՋՈՅՆ

ՏԿԵ Ա. Փ. ԻՆ

Ողջոյն ձեզ, ո՛վ կանաչ սարեր,
Բիւր ողջոյն
Հծծող սոյլին, հեծող թռչփին
մեզմօրօր,
Ձեր կոյս ծոցը նիրհող ծաղկին
մեղրածոր,
Ազատ օդին մէջը ճախրող ձեր
թռչնոյն:

Ողջոյն ձեզ այ խորոխ լեռներ
քարեղէն,
Ձեր լանջերէն կախուած ժայռին
ժառանգող,
Առեւակին՝ որ հեղուկ վշտի մը պէս
պաղ,
Արատաւալիբ կը հոսի ձեր կողերէն:

Կը ցանկայի՞ թառեւ ձեր վեհ
գագաթին,
Գէթ հոն հեռուստ գիտել արծուի
աչքով սուր,
Գէթ թռչնաթիւ այն վայրերը մը.
քո՛վս, ուր
Կարկի արեան շքեր կաթիլներ կը
թափին:

Աւա՛ղ, թէեւ սիրեցի ձեզ մինչ
այսօր,
Ո՛վ հայրենիք մանկութեանդ,
ո՛վ սար, ձոր,
Բայց ես ունիմ հայրենիք մը հե-
ռաստան:

Հայրենիք մը վշտաշարար
թանկագին,
Երկիր անուշ, զոր կը պաշտեմ ես
ու՛ ժգին,
Ո՛վ հայրենիք սրտիս, հոգւոյս-Հա-
յաստան:

Շուկա 13 յուլիս 1902

ՄԻՋԱՋԳԱՅԻՆ ՄԱՍՈՒԼԻ
ՀԱՄԱԳՈՒՄՆԻՆ ԲԵՌՆՈՒՄ

Պարոններ, Եւրոպայի հայ ու-
սանողական Միութեան կողմից,
որը կազմված է ինպատակ հայերի
պրօպագանդա անելու համար,
մենք ողջունում ենք Միջազ-
գային մամուլի ներկայացուցիչ
ներդ:

Խորապէս ցաւում ենք որ հայ
մամուլը հնարաւորութիւն չունի
ներկայացուցիչ ունենալու համար
գումարիդ մէջ. նա կաշկանդված

լինելով ամենազօրեղ գրաքննու-
թեամբ, նոյն իսկ անկարող կը
լինի արձանագրելու ձեր խորհր-
դածու թիւննրի արդիւնքը:

Գարից աւելի է որ հայ մա-
մուլը գոյութիւն ունի. 1894ին,
ոչ երկրում, այլ Կալիթայում
հիմնվեց հայ առաջին պարբերա-
կան հրատարակութիւնը: Անշուք
ուրիշ պարբերական հրատարա-
կութիւններ—հանդէսներ և լը-
րագիրներ—հիմնվեցին արդա-
քակրթութեան զանազան կեդ-
րոններում—Ալեքսանդրում, Պարի-
զում, Եւսկոպիայում և Պոլսում.
միշտ օտար երկրներում, հե-
ռու հայրենիքից: Քաղաքական
պայմանները և հազարակցու-
թեան միջնագրեան գոյութիւնը
անկարելի էին դարձնում սոպ-
րաններ և լրագիրներ հիմնել
բուն Հայաստանում:

Հայ մամուլը, ինչպէս և մ-
յլին դարերի միւս ազգային գրա-
կանութիւնները, սկսած հինգ-
երորդ դարից, բացառապէս հո-
գեւորականներով էր զեկավար-
վում. այդ պատճառով էլ նա կը-
ղերական ոգի ունէր: Միայն Թրդ
դարի կէսում է որ հայ մամուլը
մտնում է քիչ թէ շատ բնական
յառաջող իմութեան փուլի մէջ:

1895ի մեծ դէպքերը արտա-
ցոյցեցին նաեւ Օսմ. կայսրութեան
մէջ, արեւմտեան ազատամտու-
թեան շունչը տարածվեց ամ-
բողջ արեւելքի մէջ. Փոքր Ասի-
այի և Բալքանեան քնած ազգե-
րը սարսուփով նկատեցին իրենց
վիճակը և աւելի լաւ կեանքի
պէտքը զգացին: Եւրոպայի մի-
ջամտութիւնը և 1856ի Պարիզի
գաշնագրութիւնը մեծ թռիչք
տւին ազատագրական շարժումին:
Հայերը, որոնք 4րդ դարից
սկսած քրիստոնեայ են և որոնց
պատմութիւնը մշտական մի կը-
ռիւ է բարբարոսների յարձա-
կումների դէմ, նոյնպէս մղվե-
ցին քաղաքական և մտաւոր վե-
րածնութեան ճամբու մէջ:

Դպրոցների և այլ հասարա-
կական հաստատութիւնների հետ
թրքական Հայաստանում ստեղծ-

վեց և ազգային ձգտումով ա-
զատական մամուլ: Փոքր Ասիայ
մէջ հայերը առաջին անգամ
1857ին հիմնեցին պարբերական
հրատարակութիւն:

Այդ մամուլը սկիզբները որոշ
ազատութիւն էր վայելում. նա
արձագանքում էր ազգի տան-
ջանքները. որոշ չափով էլ նա
ազգային ներշնչումները նախա-
ձեռնարկ էր հանդիսանում:

Կամայ կամաց մամուլը կասկա
ծելի է դառնում կառավարու-
թեան աչքում: Երբ հայաստանի
հօրիզոնում նշմարվեց ազգային
քաղաքականութեան և զարթու-
մի շարժումը՝ մամուլը դարձաւ
դրակոնեան միջոցների առար-
կայ:

Այժմ թրքական Հայաստանում
ոչ մի պարբերական հրատարա-
կութիւն գոյութիւն չունի. հայ
գրագէտները և մտաւոր ուժերը
արտաքսված են օտար երկր-
ներ, ուր այժմ կեդրոնացած է
հայ լրագիրների մեծամասնու-
թիւնը:

Պոլսի մի քանի հրատարակու-
թիւնները միայն կեղծ գոյու-
թիւն օ՛նեն, մի թունաւորված
միջոցառում, ուր թագաւորում
է կամայականութիւնը, ի հար-
կէ մամուլը շնչել չի կարող. նը-
րա ներկայ կացութիւնը բնորո-
շելու համար բաւէ յիշել որ գը-
րաքննութիւնը, բունպետու-
թեան այդ անբաժան գոծակա-
տարը արգիլում է գործածել—
«Հայաստան», «Հայրենիք» «Հա-
յոց պատմութիւն»-ն, խօսքերը:
Հայոց հին թագաւորների անուն
ներն անգամ արտաքսված են
պարբերական հրատարակութիւն
ներից և եկեղեցական գրքերից:
Ինչ մտերս արգիլեցին գործա-
ծել, «ազգային» խօսքը:

Եւրոպայի Հայ Ռեւ. Միտ քիւն
(Շարունակելի)

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԸ

Պրիւքսէլի Գոնկրէտը՝ արդիւնք
քանի մը սրտոտ և վեհանձն Յրան-
սացիներու յարատեւ ջանքերուն՝ ա-
ռիթ մը եղաւ որ Գերմ. մամուլն ալ
կամայ սկսեց իր սկիզբով լու-
թեան շղարչը պատռէ: Համարեալ
լորթերթերը տեղեկութիւններ տուին
բազմամամբ թերթի ծաւալին և լու-
րերու առատութեան այնքան ալ ու-
շագրաւ չեղան: Անոնք որ աւելի ըն-
դարձակ խօսեցան Գոնկրէտի մասին,
լուսարանութիւններու յերիւրուով
իրենց թրքասիրութեան և բունի
անտեղեկութեան մի նոր ապացոյց
տուին: Կարծիքներու, սխալ տե-
ղեկութիւններու և նախապաշար-
մունքներու այնօրինակ խառնիճա-
ղանձ մը կը կազմեն որ դժուար է
անոնց մասին գաղափար մը կազմել
տալ:

«Քէլնիչէ Յայթունկ» էն շատ տա-
րածուած օրաթերթը, երկու առաջ-
նորդներ նուիրեց Գոնկրէտին: Ա.
ոսլին յօգուածով գոհունակութիւն
կը յայտնէ որ Գերմանացիներէն քի-
չեր ներկայ եղած են: Յետոյ կը կաս-
կածի Գոնկրէտի դրական հետեւանք
ունենալուն վրայ և ՌՐՕ ԱՐՄԷՆԻԱՅԻ
տարածած լուրերը ու առաստաղ
հայերու մասին գոյացած կարծիքը
չափազանցուած կը նկատէ՝ ի մէջ բե-
րելով Գերմ. բրօքէստի Ծէօրսթրի այն
գրութիւնը զոր վերջինս ուղղած է բան-
հայկական Գոնկրէտին:

Երկրորդ յօդուածով կը ճգնի
ապօքուցանել որ հայերը իրենց ձգ-
տումներով վիճակին աւելի անտա-
նելի կընեն: Հայաստանի անկա-
խութեան վրայ չէ կարելի մտածել:
Ընդհանուր նահանգապետի մը և տե-
ղական միջոցայի կազմակերպու-
թիւնը հայերուն համար կըլլայ անձա-
րեւի տակէն ելլալ օլուխի տակը մտ-
նալը, որովհետեւ հայերը ոչ մի նա-
հանգի մէջ մեծամասնութիւն չեն կազ-
մեր: Հայեր կան բայց Հայաստան
չըկայ: Երբ քերտերը իմանան որ
Սուլթանը այլ եւս չը կառավարեր,
բոլոր հայերը կը շարդեն—(եթէ կրնան),
Վերջաբանը կը կազմէ անմիտ տրա-
մարանութիւն մը, այն է Սուլթանին
հասկցնել իրերու վիճակը և ան կու-
նենայ բարի կամք ու ճանաչողու-
թիւն թրքական ազգասիրութիւնը
վերականգնանայնելու և երկրին վե-
ճակը բարեփոխելու:

Մտաւորապէս այս է ամփոփ ի-
մաստը յիշեալ երկու յօդուածներուն:
Ազգի որ հայի առաքեալները մոռցած

են Սուլթանի արեւշտուութեան սղօթել թէ ո՛չ գուցէ կասկածէինք որ թիւրք մըն է գրողը :

«Փրանքֆորթի Յայթուեկ» ալ երկու մասնաւոր յօդուածներով տեղեկացուց Գոնկրէսի կազմակերպութեան նպատակի և ընթացքի մասին : Այս թերթը այն հազուագիւտ բացատրիկներէն է, որոնք անաչառութեամբ վերաբերուած են ո կր վերաբերուին դէպի Հայկական խնդիրը :

«Միւնիչենընսթէ Նախրիկթըն» յուլիս 20 թուով հայկ հարցը խորագրին տակ հաղորդեց տարօրինակ լուր մը, ըստ որում իբր թէ Բարիզի մէջ գօնկրէս մը տեղի պիտի ունենայ թիւրք կառավարութեան դժուարութիւններէ յարուցանելու համար իր փոխտոմարտի իսկանը կը մեկնէ որ հայկ. խնդիրը կարծուածին չափ համակրելի չէ, և առանց քստմնելու կը շարունակէ սով որ հայերը տեղն ի տեղօք ուսում ասիրէ, իր ֆանատիկ սուլթանէն, անաեղի ոգեւորութենէն կը բժշկուին :

Ասկէ չը հետեւի որ թիւրքերը և քիւրտները իրարու ընդդէմ զանազան ըստ հաճոյնց կողոպտելու և սպաննելու («անմեղ վայրենիներուն միակ յանցանքը ուրիմ կողոպտելն ու սպաննելն է») բայց Գերմանիոյ և անոր բնակիչներուն համար պատճառ մը չի կայ միեւակի մը վրայ հոգալու, որուն տեսական դատապարտութիւնը տարակուս չի վերցնիր :

Գերմ. սօց. կուսակցութեան կեդրոնական օրգանը՝ «Փօրվէրց» թղթակցութիւն մը հրատարակելով Պրիւքսէլէն, թղթակիցը «իրաւունքի պահպանութեան և կեանքի կարելիութեան նուազագոյն աստիճան» անուանելով մեր պահանջները կը վերջացնէ իր համակրելի գրութիւնը շեշտելով այն նախապաշարմունքներու սխալ ըլլալը, որոնք գոյացած են երկրին և ժողովուրդին անձամբ շրջաններուն մէջ, Հայերուն եօթը ութերորդը երկրագործներէ, արհեստաւորներէ, բանուորներէ կը բաղկանայ ուղղամտօրէն կը հաստատէ յարգելի թղթակիցը : Թերթի խմբագրութեան կողմէ եղած նկատողութիւնը հետեւեալ վերջաբանն ունի. «ասոնք իրօք չարաւոր պահանջներ են. քարտէզի փոփոխութիւն, կործանում, կրօնքի կամ ցեղի նախապատուութիւն չեն նշանակեր, այլ առաջին քայլը մարդավայելի միեւակ մը ձեռք ձգելու յիշեալ նահանգներուն մէջ : Այս մտքով ըրող երկիրներու ընկերակազմական համակրանքը հաստատէ :

Եւ աշխատաւոր դասակարգի այս անկեղծ համակրանքը մեզ համար զնահասելի է :

«Փրանքֆորթի Յայթուեկ» թիֆլիսէն քաջուած հեռագրով մը քաղաքին մէջ գէնքի գործածութեան արգելումը կը տեղեկացնէ :

Չաւէ յատկերթի մը այս շաբաթուայ թիւը մարդասպանի շատ յաջողած պատկերը դրած էր իր կողքին վրայ :

«Մօսէրէ Գուսթ» ամենէն համբաւաւոր գեղարուեստական հանդէսը Ավագօվաքի մէկ յկարը (եօթներորդ Ալիքը) արտասպառ էր : Հանդէսը գովեստով կը խօսի հռչակաւոր նկարչի տաղանդաւոր ճաշակին և կարողութեան վրայ : Դժբաղջաբար Այվագօվաքի ծանօթ է իբրև ուսական նկարիչ

Գե. մանիա

ԳԱՒԱՌԱՅԻ

ՍԱՀԱ ՄԵՍՐՈՊԻ ՏՕՆԸ

Յ ի լ ի Պ Է Ի Մ Է Ջ

Փշտ մը ըլլալէ զատ ապերախա ալ գտնուեր է հայ եկեղեցին մեր ամենէն մեծ եւ արդիւնաւոր գործընկերուն : Սահակի եւ Մեսրոպի նկատմամբ, երբ անդին պատահած սուրբի յիշատակին տեղէն չի վերնալու չափ ծանր կիրակիներ հաստատեր է :

Առ հոյակապ դէմքերու մեծութիւնը յոյց տալու համար հարկ չի կայ երկար բարակ խօսքերով :

Իրենց ձգած գործը կը բաւէ ցոյց տալու իրենց մեծութիւնը :

Եւ մեր թարգմանիչներու համեստ կեանքը, թողուցած վեհ գործը պէտք չունէր շիտակը մեր եկեղեցիին այդ շնորհքին : Եթէ, մեր ժողովուրդը ինքը հետաքրքրուէր, ճանչնար անոնց գործը, ինքնաբերաբար փրճանէր անոնց տարեդարձը, աստուծոյ յարգելու համար առ մեծ մարդոց յիշատակը :

Ոչ մէկը, ոչ ալ միւսը գոյութիւն ունի գժբաղջաբար :

Ու առ պարտականութիւնը կիցն այ մեր մտաւոր կեանքին հետ կապ ունեցող մարմիններու, հաստատութիւններու վրայ :

Չեմ կրնար գիտնալ բնականաբար, թէ Պուլկարիցի եւ կամ հայութեան զանազան խաւերուն մէջ կամ կարգի քանի՞ հաստատութիւններ կամ մարմիններ մղուած են, զոնէ համեստ հանդէսով մը յիշելու յիշեցնել մեր հասարակութեան այդ հոյակապ դէմքերու յիշատակը, կատարած գերը :

Սչքի առջև ունենալով իրողութիւններ, վստահաբար կրնամ ըսել սակայն, որ յիշ, շատ թէ տեղեր մտածուած է ատի :

Ուրախ եմ յայտնելու որ, առ պարտականութիւնը մասամբ կատարեց Ֆիլիպի «Վրասիբրաց Եղբայրութեան» վարչութիւնը :

Անոր նախ ձեռնու թեմամբ յուլիս է Եջ գիշեր գրական եւ երաժշտական երկերով մը սարգուած էր—բան մը որ Գլխաւոր կանոնագրութեան ալ մաս կը կազմէ կարծեմ : Հանդէսը տեղի ունեցաւ Ֆիլիպի հանրային պարտէզի լճին եզրերը, բացօթեայ, ծախքը միայն գոցելու չափ պզտիկ մուտքով մը :

Չի նայած որ իրենց բացակայութեամբ կը փախչին, նոյն իսկ ասանկ տօնի մը, մեր շատ մը ջոջ աղաները եւ հայ բնամեթներ, նորէն գոհացուցիչ սեպուելու չափ հոծ բազմութիւն մը փութացած էր յարգելու թարգմանիչներու յիշատակը :

Հանդէսին գլխաւոր փայլը կը կազմէին Երգեցիկ—թատր, երկես խումբը եւ մարմնամարզական «Վահագն» խումբը :

Երգեցիկ խումբը երգեց պարբերաբար—«Մեր հայրենիք, Պայէք տեսէք հայ ժողովրդական պարերգը, «Լուսն ամպերը, Կախաղան եւ որսորդական ելգը» : Անկեղծ ըլլալու եկեղեցի Պ. Մ. ին ալ խաթրը խօշ ընելու համար ըսեմ որ «Լուսն ամպեր» մէկ ձայնը անյայտ անցաւ հապճեպ ձայն արուելուն պատճառով, իսկ միւսները յաջող գուրա եկան, մասնաւորապէս «Վահագն» տեսէք եւ կախաղանը այն քան ոգեւորութիւն առաջ բերին որ բոլորն ծափերէ ստիպուած կրկնեցին : Մարմնամարզական «Վահագն» խումբը—որուն միջոցաւ կարողութիւնը

նը թերացայ մինչեւ հիսա հազորդել, մանաւանդ որ մէկ երկու անգամ ալ հանդէսներու մէջ յաջող եւ ճերմակ-երես գուրա եկած է եւ հասարակութիւնը գոն ձգած—աս անգամ ալ մասնակցեցաւ : Հանդէսին քանի մը փորձերով, Սուլթը շատ լաւ եւ ուրախ տպաւորութիւն մը թողուց եւ յիշեցուց մեզի ապագայ հայ գիւնորները, որոնք զինուորական միջոցներն նուազած եղանակներուն ջանքին ճարտարները կը յարմարեցնէին իրենց շարժումները : Ինչպէս պզտիկութիւնը արգելք եղաւ մէկ երկու ձեւերու ալ աւելի կանոնաւորութեան :

—Հայ մասնաւոր վարժարանի աշակերտներէն մէկ երկուքը յաջող արտասանութիւններ ըրին : Պ. Պիոնեան օրուան տօնին առթիւ բանաստեղծութիւն մը ըրաւ եւ պատմական ընդարձակ տեղեկութիւններ տրւաւ : Պ. Կրօն Միքայէլեան ձաւ մը կարգաց եւ Սահակ Մեսրոպի մասին պատմութենէն հատուածներ մէջ բերաւ :

Ասոնք կը կազմէին հանդէսին ամբողջութիւնը :

Չեմ կրնար լուռ անցնիլ Պ Կրօն Միքայէլեանի նախաբանին վրայէն : Կոզեմ անկեղծապէս ըսել, որ աւելի գոհ եւ ուրախ արամադրութեան տակ պիտի մեկնէի աս գեղեցիկ երկերովէն, եթէ պ. Կրօն Միքայէլեան, օգտուելով «գրասիրաց եղբայրութեան» վարչութեան արարած հրահանգին, իր նախաբանով—որիչէ աւելի «չարամտութիւն» կը հոտէր քան թէ անկեղծութիւն, ինչպէս ԿՐԼ լեցնելու օգտին—չի ձգնէր հայրենի շուկելու, աս ու ան կծելու :

Աս գոգոնութիւնը իմացայ հանդիսականներէ շատերէն :

Եթէ պ. Կրօն ինքզինք ցուցնելու տարիքը չուզէր փախցնել նախորդ տնօրէնին պէտ, առոր բեցիք չունիմ : Միայն դիտել կը տեսամ որ առոր պէտքը չի կայ եւ ձախող միջոց մըն էր բրածը : Իր բոլորած շողորմելի շրջանը կը բաւէ ինքզինք ցոյց տալու :

Ինչ կուզէր հասկնել : Ո՞վ պահանջեց իրմէն որ իր համոզումները (՝) վաճառքի գնէ, անկեղծ (՝) ըլլալ, հոգ չէ թէ օրական տասն անգամ քծնի աս կամ այն աղային : Ո՞վ մտածեց ու առաջարկեց այդ, մարմիններէն—ինքն ալ մէջը հաշուելով—նախաձեռնարկ ըլլալով տօնել Սահակ Մեսրոպի ազգ. յարկին մէջ եւ Գրասիրացը մերժեց :

Կրնայի իր տուգինայ մը «կը փափաքէին» երբեք դէմ (միայն չոր փափաք) : Երկու տուգինայ «նկատուելով» ալ եւ յարել, բայց պէտք չեմ տեսներ : Աս չափ ըսեմ որ, հանդէսին համար—աս տաք օրերուն մասնաւոր վարժուած տեղէն աւելի յարմար տեղ մը չէր կրնար ընդունուիլ իմ կարծիքով, երբ անդին եկեղեցիին շրջաքաղը իր անարմարութիւններովը միասին, մարդոց տեղը դերագմանները արգէն գրաւած է :

Հարկ չը կար հասարակութեան ջերմեանը իրեն շահագործել փորձելու :

Աս վրան բաց ձեռք թողնելու ներուն շատ աղէկ կը յարմարէր պարտի պատուելիական շեշտները, դերասանական հոտած ձեւերը, որ մը առաջ գրուած ճառի մը մէջ հանդիսականներուն դէմքի արտայայտութիւնը տեսնելու գուշակութիւնը, «ախրերը», «վրէժներն» ու «ուայնեքը», որոնք միամիտները շեշտեցու

պատուելիական հինցած, հոտած միջոցներ են եւ վարագոյր մը կատակերգութեան չափ ալ տպաւորութիւն թողուցին : Ետտ չեմ տեսներ :

Ինծի մամար, մէկ խօսքով, կարեւորը սա է որ Գր. Եղբ. վարժութիւնը յաւ գործ մը բրաւ տօնելով—ուր տեղ որ ալ ըլլայ—Սահակ Մեսրոպը եւ հասարակութիւնը գոն մնաց :

Հրանդ-ժիրայր

Հ. ԱՐՄԵՆ ԱՐՔԵՊՈՒ ԱՅՏՆԵՆԻՍ

ՄԱՅԸ

Հայր Այտընեան 1825ին ծնւած երայ, ուր Վենետիկի Միջովարեան վարժարանը գնաց վարժարանէն հասակին մէջ, բայց վարժարանը հրգեհուելով ամբողջ միայն հոն մնալէ ետք ստիպուեցաւ Ղալաթիոյ Վիէննական Հայրերուն վարժարանը երթալ, որիչ յիշեալ միտքաւորութեան ինքայ վարժարանը փոխադրուեցաւ :

Այտընեան այդ վարժարանի մէջ գրաբարի առաջին ծանօթութիւնները ստացաւ Հ. Վրգանէ վ. Չալըխեանէն, և հոն է որ կուսակրօնութեան կոչում ունենալը յայտնեց, որուն վրայ 1835ին փոխադրուեցաւ Եւրոպ. Վիէննական Միջովարեան վարժարանը : Այսպէս արու թեման յաջող լինան մը անցուց մինչեւ 1845 ըստ յեմեր մէկ, որ ատեն եկեղեցական ձեռնադրուեցաւ : Հ. Այտընեան լիակատար հմտութեամբ բերած էր և տիրացած գերմաներէնին, ինչպէս նաև փոխտոմարտի թեման և նոյն իսկ աստիպալ խումբան :

Քահանայութեան աստիճան ստանալէն յետոյ սկսաւ Այտընեանի գրական կեանքը : 1845թ թարգմանեց Կիկերոնի Միջովարժարանի գրաբար Նոյն ատեններն է որ իր հետապտու թեման շնորհիւ յայտնուեցաւ Ազատագրութեան ձեռագրի կրկնագիրը ըլլալով, այսինքն տեսնուող գրաբարներուն տակ տեսանելի գիրեր ալ գտնուիլու բան մը զոր ինք պայցուցած է 1847ին պատրաստեց հայերէն տարբերով մեծ երկրագունայ որ իր տպագրական մասին թեմամբ ու կանոնաւորութեամբ հիացում իսկ պատճառեց վիէննայի աշխարհագրական ընկերութեան նախագահին : 1851թ պատրաստեց արարեցին մեծ երկրագունայ մը որ անտիպ կը մնայ իլլաւոր գործը, սեն որ փառք կը կազմէ Հ. Այտընեանի անկեղծ քերականութեան և որ աստիճանորդ եղած է աշխարհագրագրականութեան պատրաստութեան :

Հ. Այսընեան յաջորդարար  
 ճամբորդած է Պոլիս, Իզմիր,  
 Այսթըն, Բարիզ և Վենետիկ,  
 1851ին առաջին անգամ իբր զա-  
 սատու գացած է Իզմիր, 53ին  
 կրկին Վիեննա վերադարձած է,  
 և տարի մը մնալէ վերջը կրկին  
 Իզմիր գացած է ուր 1856ին, ա-  
 տարիական հիւպ. Պ. Սթալյոնէլ ի-  
 րեն յանձնած է իր զաւակներուն  
 կրթութեան հարգ. Այդ ատենները  
 Այսթընեան որ արդէն թուրքերէն  
 գիմանիսէն, Ֆրանսերէն և  
 յունարէն լեզուները կատարելա-  
 գործած էր, մեծ սէր մը տուաւ  
 նկարագրեան և բաւական ալ  
 յառաջ գիմնց. Պատրաստած է  
 շատ մը կրօնական նկարներ,  
 ինչպէս նաեւ Մխիթար Աբրահամ  
 կենդանագիրքը: 1867 ին վարիչ  
 կարգուած է Վիեննայի Մխի-  
 թարեանց Պոլսոյ վարժարանին  
 և մինչև 1876 բազմաթիւ հաս-  
 ցուցած է կերտներ որոնք մեծ  
 փորձերու տիրացած են այսօր Այ-  
 սթընեան ինքնաբերաբար հրատար-  
 ցու այդ պաշտօնէն և անկէ վերջ,  
 մինչև 1886՝ իր ընդհանրական  
 աբբայ ընտրուելուն թուականը,  
 յաջորդարար 1881ին «նախա-  
 զահ» կարգուած է նկեղեցական  
 երգոց մասնաժողովին, 1882ին  
 անդամ Պոլսոյ «հայրապետական  
 ծխարանի մասնաժողովին»:  
 Նոյն տարին անդամակցած է  
 Մխիթարեան վանական ընդհ.  
 ժողովին և կարգուած է Մեծա-  
 որ Մայր վանքին:

Այսընեան միշտ մեծ սէր  
 տուած է եկեղեցական երգեցո-  
 ղութեան և մասնաւորաբար 1854  
 էն սկսած է դարձան մը փնտռել  
 եկեղեցական երգերը օտարամուտ  
 յաւելուածներէ մաքրելու հա-  
 կար: Այդ նպատակով երկար աշ-  
 խատութիւններ ունեցած է Վի-  
 էննա, Նախ Բթօֆ, Վայսի և յի-  
 տոյ Բթօֆ, Պէօմի հետ, և այդ  
 աշխատութեանց շնորհիւ կրցած  
 է բոտ բաւականին հասնիլ իր  
 նպատակին: Իր ջանքերուն ար-  
 զիւնքն են նաեւ Վիեննայի  
 Մխիթարեան տպարանին նոր ու  
 գեղեցիկ առուերը: Ինք եղած է  
 նաեւ հիմնադիրը «Հանդէս Ամ-  
 ոօրնային»:

Հ. Արսէն Այսթընեանի մահը  
 ճամբորդ կորուստ մըն է հայ  
 գրականութեան համար, որուն  
 զարգացման այնքան նպաստած է  
 իր «Քննական Գերականութիւ-  
 ն»ով: Իր ուսուցչական և եկեղե-  
 ցական գործունէութիւնն ալ ո՛չ  
 նուազ նշանակելի է, իր աննկուն  
 և յարատեւ աշխատութեամբ:  
 Մեր խորին ցաւակցութիւն-  
 ները կը յայտնենք Վիեննական  
 Մխիթարեան Միաբանութեան՝  
 իր պատկառելի Աբրահամ մահ-  
 ունը առթիւ:

ՆԱՄՆԻ ԽՄԱԿՆԻՐՈՒԹԻՒՆ

Թաւրիզ, Յուլիս 1902

Ո՞վ կը հաւատայ այնպիսի հերքում  
 ներքի, որունք այսպէս են գրված ի-  
 նուստ—սուստ է, խեղաթիւրված է:  
 Նա՛ ո՞վ հաւատում է այսպիսի մի  
 խօսքի—մածունն սեւ է, որ սուստ  
 են սպիտակ է —Հարկաւոր են փաս-  
 տեր, ապացոյցներ այդ բանն հաս-  
 տատելու համար:

«Շարժում» թիւ 425ում Թաւրի-  
 զի կաթոլ. մխիթար Պ. Ռաֆազան  
 իր մի նամակով, որ իբր թէ իմ թիւ  
 410—420ում տպված նամակիս պատաս-  
 խանն է, այսպիսի տպաւորութիւն է  
 թողնում.—մի հաւատացէք, սուստ է:  
 Առանց փաստերի, առանց ապացոյց-  
 ների, ձիւղ այնպիսի պատասխան,  
 որ երես առած երեխան կտայ իր հօրն  
 երբ սա նրա մի յանցանքն իմանայ:

Սկզբում ես աւելորդ իսկ համա-  
 բեցի պատասխանել նրան, այնքան  
 չնչին նշանակութիւն ունէր ինձ հա-  
 մար այդ նամակն. սակայն այնտեղ  
 երկու կէտ կար, որոնց հարկաւոր  
 էր պարզել. ուստի այս վերջին նա-  
 մակս էլ գրեցի, թողնելով այնու-  
 հետեւ պարոնին, որքան կուզէ թող  
 մածնի սեւութիւնն ապացուցանի իր  
 հերքումներով:

Առաջինն այն՝ որ պարոնը միշտ  
 խոսք է տալիս ուղղակի գիտաւոր  
 հարցին պատասխանելուց, ես փաս-  
 տերով ցոյց եմ աւել, որ կաթոլ.  
 միսօն. սուստ են սուստ յայտարարե-  
 լով թէ իրանց նպատակն է օգտակար  
 հանդիսանալ հայ տարրին. ոչ, ձեր  
 նպատակն մարդորսութիւնն է, դուք  
 աշխատում էք աշակերտներին, ըստ  
 ձեր կարծիքի, բարեք անել—կաթո-  
 լիկացնել, ուրիշ ոչինչ:

Թէ «Մշակ» ում եւ թէ «Շարժում»  
 ում տպված նամակներու մասնաւոր  
 եմ ասել, բայց պարոնն ինչ որ կողմ-  
 նակի հարցեր մէջ բերելով այդ հարցն  
 ցանկացել է քննեցնել:

Գրում է թէ գիշերօթիկ երեխայի  
 մասին «խեղաթիւրված է» շնորհ  
 անէիք ճշմարտութիւնն գրէիք. ինչ  
 պէս է եղել այդ: Ինչու չէք գրել,  
 թող ձեզինք ճշմարտութիւնն իմանա-  
 նայինք. գուցէ չը գիտէ պարոնը,  
 որ այստարին միախառնելիք չէ կազ-  
 մըված, որ նրա «խեղաթիւրված» է  
 ասելուն անպայման հաւատ ընծայէ:  
 Փաստեր աւելք, ապացուցէք իմ սը-  
 խալ լինելս: Չէի կարող, որովհե-  
 տեւ ճշմարտութիւնը սուստ դարձնե-  
 լու փաստեր չունէք. ձեր զպրօքի  
 բոլոր աշակերտները գիտեն ձեր այդ  
 անխիղճ վարմունքն, գիտէ մեր ա-  
 ունջնորդարանը, ուր ապաստան էր  
 գտել ձեր գոհը, գիտէ նրա մայրը,  
 գիտեն եւ այդ մանկան թաղման  
 ներկայ գտնողներն. գիտեն, որ  
 մահամերձ երեխային «բիստոնէա-  
 կան բարութեամբ» ճանապարհ էք  
 գրել դէպի... փողոց...:

Ձեր կանոնի համեմատ աշակերտ-  
 ներն պէտք 13 ժամ պարոցում գտնը-  
 վեն եւ աշխատեն: Այդպէս խոստո-  
 վանել էք դուք նաեւ «Մշակի» 26  
 թ. ում, այդպէս էր նաեւ իմ նամակս  
 գրելու ժամանակ, աշակերտներն ա-  
 ուսուստ Յից գալիս էին մինչև երե-  
 կոյ 7ին, իսկ թէ այնուհետեւ 8 ժա-  
 մի էք իջնցրել, ուրախ ենք, որ  
 մեր յորդորներն իրանց որոշ ազդե-  
 ցութիւն ունեցել են:

Ձարթո, որն խմբագրութիւնը կա-  
 բերու էր համարել փոխել երեք աստ-

ղի: Ճշմարտութիւնն գրելու համար  
 ես պէտք չունէի 3 աստղի օգնու-  
 թեան: Յոյս ունեմ, որ լարդելի  
 խմբագրութիւնը բարի կը գտնվի,  
 այս խնդրի առթիւ այս վերջին նա-  
 մակը «Շարժում»ի մօտակայ համար-  
 ներէից մէկում զետեղելու համար:  
 ՅԱՐՐՕ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Սիւստի 16 յուլիս 1902

Գարոցական գործերու բարեւոյ  
 ղեկավարման համար անհրաժեշտ  
 է որ իր պաշտօնին գիտակից հո-  
 գաբարձուական մարմին մը ունե-  
 նանք: Յաւ է նկատել տալ  
 որ Սիւստիէն այդ բանը ոչ ու-  
 նեցած է ոչ ալ ունի այսօր և ոչ  
 ալ պիտի ունենայի յայտնի նը-  
 շաններ և յոյսեր կը նշմարենք:

Կընդունինք որ հոգաբարձուա-  
 կան մարմին մէջ առեւտրական-  
 գիրք ունեցող, պատուաւոր ճան-  
 չցուած աւհատներ գտնուած են  
 և կը գտնուին, ի հարկին գան-  
 ձումներու համար կօշիկ մաշեց-  
 նող և փոխատուութիւն ընդուն-  
 նոյն իսկ: Բայց այդ ամենը «եր  
 կուճի սկիզբը» կարելի է համար-  
 րիլ: Ստակը, այսինքն նիւթա-  
 կան ուժը առաջնակարգ պէտքե-  
 րէն մէկն է: Այդ կընդունինք.  
 ոչ նուազ կարեւոր է և եկող գա-  
 ցողներ ալ ունենալը: Ատ ալ կը  
 ընդունինք. ասոնցմէ առաջ կամ  
 անմիջապէս ասոնց մօտիկը պէտք  
 է կենսան և դպրոցավարութեան  
 բարոյական հոգը տանող ազգա-  
 յիններ հոգաբարձուական մար-  
 մին մէջ ծախսուած հազարա-  
 ւոր դրամներու փոխարէն միջակ  
 արդիւնք կարենալ աւելու համար  
 բան մը որ աչդար բայց թող  
 կերպով նկատել տուաւ յուլիս  
 7ի նախընթաց ներկաներէն մին:

Ամենահասարակ դրութեան մը  
 հետեւանով քանի որ հոգաբար-  
 ձութիւնը կազմող ուժերու միջեւ  
 պահանջուած լրացնող ներդաշ-  
 նակութիւնը չը կայ գէթ չափով  
 մը, դպրոց, ուսուցիչ, ծրագիր  
 բոլորովին անհամ և անլի վիճա-  
 կի մէջ են. քիչ մը գիտակցու-  
 թիւն հոգաբարձութեան կամ  
 Սիւստիէնաբանակ ամեն պարզ հայ  
 անհատի կողմէ եւ ըստս հաստա-  
 տելու դժուարութիւն չը պիտի  
 քաշուի:

Երկարօրէն փիլիսոփայելու մը  
 տաղութիւն չունիմ հոս ձեռք  
 առնուելիք միջոցներուն վրայ:  
 Ես կըսեմ,

Պէտք է ալ սթափինք, լրջօ-  
 րէն վերաբերուել գիտնանք հար-  
 ցի մը նկատմամբ որ ուղղակի  
 մեր հոգիին և գոյութեան հետ  
 կապ ունի. համախմբուածներ եւ  
 գումարումներ ունենանք. շիտակ  
 ու մարդավայել կարծիքի փոխա-  
 նակութիւններ որպէս զի համե-  
 մատապէս լաւագոյն սարեւրջան  
 մը սկիւնք 1902 1903ին համար:  
 ձԱՆ

ԲԱՅ ՆԱՄԱԿ

Պրն. Յ. Կ. ձԱՆԿԻԼԵԱՆԻՆ

Սիրեղի Հայրենակից,

«ՁԱՅՆ ՀԱՅՐԵՆԵԱՅԻ Մէջ մէկ  
 թղթակցութիւնը կարգացի, որ-  
 մով խնդակցութիւնը կը յայտ-  
 նէիւր Հնչ. Միութեան համար. և  
 ապա անտարբերութիւնը պախա-  
 րակելով՝ հրապարակաւ խոստում  
 ըրած էի իմանալու անոնց հետ:  
 Ուրախացայ որ անտարբերութե-  
 նէ կը խորշիս:

Գում—Գափուի առաջին ցոյցը՝  
 որուն մէջ գլխաւոր դեր մը  
 ստանձնած էիւր, այն օրէն ի վեր  
 հայ հրապարակին վրայ ամենուս  
 ծանօթացար. հայ դատին հե-  
 տաբարբուրդ բոլոր անհատները  
 քեզի սիրեցին, արտասահմանի  
 մտմուլը, մասնաւորապէս Հնչակ-  
 եան օւկանները քու վրայ երկար  
 կանգ աւին:

Հայ ըմբոստացումին մէջ ու-  
 նեցած մասնակցութիւնը. օրւան  
 զգայնութ սրտերը խանդավառեց,  
 արտասահմանի մէջ իրաւամբ  
 դու մեր հերոսն էիւր, աքսորի  
 օրերդ՝ մեր սրտին էնմեծ վիշտն  
 էիւր. աքսորանքէդ վերադարձը  
 մեծ ուրախութիւն պատճառեց  
 բոլոր ազգին: «Մարտ» Մար-  
 սէլէն մինչև Լոնտոն քու քա-  
 լելիք ճամբուդ առջև գրչի ծա-  
 ղիկներ ու գորգեր փռեց. թէեւ  
 կը հաւատամ թէ դու ալ զգացիր  
 որ համեստութեան սահմանը ան-  
 ցան շուրջը շուրջուած բառախա-  
 ղութիւններուն համար: Հոգ  
 չէր, մենք ուրախ էինք, որով-  
 հետեւ դու ազատ էիր աքսորան-  
 քի դառնութենէն:

Շատ չանցաւ, լսեցինք որ քե-  
 ղի զմուտ և խունկ նուիրող  
 «Մարտ»ը սկսաւ էն տխուր ա-  
 ծականներովը որակել քեզ.  
 պատճառները հարկ չի կայ թուել  
 հոս, դու լաւ գիտես: Հիասթա-  
 փութիւնը սկսաւ պտուտքել մեր  
 գլխուն վրայ:

Այս ամեն կատակերգութիւն-  
 ները բացատրող «գիմակաւոր-  
 ներդ» ամեն բան «աշկարա»  
 գրած էր, մենք բնական էր որ  
 քեզի պիտի հաւատայինք, որով-  
 հետեւ անոնց տխուր ծեծվըտու-  
 քը ու եղբայրասպան գործերը  
 տեսած էինք. իսկ դու հեռու  
 մնացած էիր այդ տխուր դրամա-  
 յէն:

Քեզ վարկաբեկողները որ Վե-  
 րակալմեալ Հնչ. կեդր. վարչու-  
 թիւն էր, քու «գիմակաւոր-  
 ներդ» անոնց ներքին մարդը,  
 փաթաթուած քոչը աւելի բա-  
 ցաւ ամբողջ հայութեան աչքին  
 առջև:

Իրարանցումը, խժտութիւնը, ան-  
 հասկացողութիւնները օր առաջ  
 եկաւ արտասահմանի բէմին վրայ  
 ու մամուլին մէջ, էն մեծ բաժի.

